Զովաբերի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝
գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1.Զովաբեր համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի /Ծածկագիր՝ 1.2-1/

- Համայնքի ղեկավարի հաստատմանն /կամ փոփոխմանը/ է ներկայացնում համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը
- համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում համայնքային ծառայության եւ ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը
- մշակում եւ համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի աշխատանքային ներքին կանոնները
- կազմակերպում է քաղաքացիների դիմումների, առաջարկությունների, նրանց ընդունելության
- համայնքի ղեկավարի կարգադրությունների եւ որոշումների, ավագանու որոշումների գրանցումը, հաշվառումը հատուկ մատյաններում
- մասնակցում է ՏԻՄ-երի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին
- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝ բարձրագույն կրթություն եւ համապատասխան մասնագիտական ստաժ եւ աշխատանքային հմտություն:

2.Զովաբեր համայնքի ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /Ծածկագիր՝ /3.3-1/:

Նշված պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է առնվազն միջնակարգ կրթություն եւ համապատասխան օրենքների եւ իրավական-նորմատիվ ակտերի իմացություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

-դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի՝ դիպլոմի / ների/, վկայականի /ների/, անձնագրի պատճենները՝ բնօրինակի հետ միասին

-արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին

-մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև 13.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Զովաբերի գյուղապետարանում:

Մրցույթը կանցկացվի 30. 03. 2012թ. ժամը 12:00-ին, Զովաբերի գյուղապետարանում:

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԿԵՏՆ Է՝ 16. 03. 2012թ.:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ԶՈՎԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ /Գեղարքունիքի մարզ, գ. Զովաբեր, հեռ. 0261-6-10-95/ եւ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ: